



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 10 ՅՈՒՆԻՈՒՐ, 2011

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՓՐԿՈՒԹԵԱՆԴԻ ԿԸ ԿԱՐՕՏԻՄ

Փրկութեանդ կը կարօտիմ, եւ իմ յոյսս խօսքիդ վրայ դրեք եմ:

Աչքերս յոգնեցան եւ խոստումիդ կատարումին սպասելէն,

եւ հարց կու տամ.– Ե՞րբ պիտի գիս հանգստացնես:

Ծուխէն սեւցած տիկի մը պէս անպէտ դարձայ,

բայց կանոններդ չհանեցի եւ միտէս:

Ո՞րքան պիտի ապրիմ դեռ ես՝ եւ ծառայ.

Ե՞րբ դատաստանի պիտի ենթարկես անոնք՝ որ գիս կը հալածեն:

Ամբարտաւան այդ մարդիկը ինձի փոսեր փորեցին,

որովհետեւ յարգանք չունին Օրէնքիդ հանդէպ:

Քու բոլոր պատուէրներդ նշմարիտ են.

սուտ պատճառներով կը հալածեն գիս, օգնէ՛ ինձի:

Քիչ կը մնայ որ աշխարհէն վերցընեն գիս.

բայց ես հրահանգներդ երբեք չեմ մոռնար:

Քու սիրովդ կեանք տուր ինձի, որպէսզի ես կարենամ

եւ սահմանած պատուիրաններդ պահել:

Փառք, պատիւ եւ երկրպագութիւն քեզի,

յաւիտեանէ մինչեւ յաւիտեանս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատուր Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

Բարերար եւ ամենակալ, ապաւէն եւ յոյս բոլոր փազնապողներուն՝

Տէր իմ եւ Աստուած իմ, որ անէութենէ ստեղծեցիր եւ կը նախախնամես ամէն բան:

Սօրեցիր ինձի անճառելի գթութեամբդ եւ ողորմէ՛ ինձի քու առար ողորմութեամբդ, որովհետեւ քաղցր ես բոլոր անոնց հանդէպ, որոնք կը դիմեն քեզի եւ կ'ապաւինին մարդասիրութեանդ:

Լսէ՛ ինձի, Բարերար, քաւէ՛, Անյիշաչար, եւ ծառայ արժանացուր վերին օթեւաններուն, քու սուրբ անունդ սիրողներուն եւ քու աստուածութեանդ հաճելի կամարարներուն հետ,

որոնք երկնքի մէջ ու երկրի վրայ են,

որպէսզի անոնց հետ անլռելի օրհնաբանութեամբ փառաւորեմ

Հայրը եւ Որդին եւ Սուրբ Հոգին,

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՕՐՈՒԿԱՆ ՆԻԻԹ

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլխ. 5

Յիսուս կը սկսի առաքելութեան

Երանելիներ

1. «Լեռ ելաւ ու հոն նստաւ»:

Անցեալի բոլոր ուսուցիչները, ու այս պարագային անոնք որոնք օրէնքը կը մեկնաբանէին, միշտ նստած կ'ըլլային յարուկ աթոռի մը վրայ, որ նաեւ կը կոչուէր Մովսէսի աթոռ: Իսկ յունական աշխարհին մէջ, ընդհակառակը, ճեմելով կը դասաւանդէին, որմէ կու գայ «Ճեմարան» բառը: Հետեւաբար, հեղինակութեան մը հարց է:

«Լեռ ելել»:

Մարթնոսի մտքին մէջ կայ համեմատութիւն մը Մովսէսի հետ: Այնպէս ինչպէս Մովսէս Սինա լեռ բարձրացաւ Իսրայէլի ժողովուրդին փալու Աստուծոյ Օրէնքը, հիմա Քրիստոս ինք լեռ կը բարձրանայ փալու Նոր Օրէնքը, որպէսզի անով դառնայ ժառանգորդ երկնքի արքայութեան, քանի այդ արքայութիւնը մօտեցած է:

2. «Ան կը սկսի ուսուցանել»:

Ուսուցանել կը նշանակէ որոշ ճշմարտութիւններ փոխանցել, բացատրութիւններ, մեկնութիւն ընել:

3. «Երանի ...»:

8 Երանելիներ, որոնք ձեռով մը 8 ճշմարտութիւններ, 8 յարկանիշներ են, անոնց համար, որոնք կանչուած այդ արքայութեան ժառանգորդներ դառնալու: Այլ խօսքով, այնպէս ինչպէս որեւէ մէկ պետութեան մը կամ երկրի մը պարագային քաղաքացին դառնալու համար կան սկզբունքներ եւ օրէնքներ, նոյնպէս ալ Երկնքի արքայութեան պարագային կան յարուկ սկզբունքներ եւ օրէնքներ: Ի փարբերութիւն, սակայն, որ երկրաւոր քաղաքացիութիւնը եւ երկնաւոր քաղաքացիութիւնը ամբողջովին շրջուած պարկերն է:

4. «Երանի հոգիով աղբարներուն, որովհետեւ անոնց է երկնքի արքայութիւնը»:

Առաջին հերթին յարակեցում մը, որ Քրիստոս իր խօսքը կ'ուղղէ նկարի առած ոչ թէ նիւթական իմաստով աղբարին, այլ հոգիով, թէպէտ անոր մէջ կարելի է տեսնել նիւթական բաժինն ալ, որովհետեւ շար աւելի դիւրին է աղբարին հետեւելու Քրիստոսի քան հարուստը, որովհետեւ գերծ է որոշ կաշկանդումներէ եւ կապուածութենէ: Հակառակ անոր, երբեք ալ չի նշանակեր, որ նիւթապէս աղբարը արդէն իսկ մեքենականօրէն կրնայ ժառանգել Աստուծոյ արքայութիւնը, արոր համար ալ Մարթնոս Աւետարանիչի մէջ աւելի յարակ է պարկերը որպէս «Հոգիով աղբար»:

Ո՛վ է հոգիով աղբարը, հետեւաբար: Այն մարդը, այնպէս ինչպէս նիւթապէս աղբարի պարագային, որ կարօտեալ վիճակի մէջ է: Հոգեւոր առաքինութեանց, երկնքի արքայութեան, Աստուծոյ ողորմութեան կարօտը ունի: Այլ խօսքով, Աստուծոյ վրայ դրած է իր ամբողջական յոյսն ու վստահութիւնը: Օրինակ, մաքսաւորը: Իսկ այն մարդը, որ ինքզինք ապահով կը զգայ, մարդոցմով կամ ինքզինքով զօրաւոր կը զգայ, այդպիսին կարծէք Աստուծոյ կարիքը չունի, Աստուծոյ կարօտ չէ, եւ հետեւաբար չի կրնար Հոգիով աղբար կոչուիլ: Օրինակ, փարիսեցին:

5. «Երանի սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն»:

Այնպէս ինչպէս հոգիով աղբարի պարագային, սգաւորներու պարագային ալ, անոնք չեն, որոնք հարագար մը կամ պարագայ մը կորսնցուցած ըլլան, եւ հետեւաբար սգան, թէեւ կայ այն բաժինը, որ Աստուած կրնայ մխիթարել զիրենք: Բայց այսպէս խօսքը կը վերաբերի բոլոր անոնց, որոնք ոչ միայն իրենց սեփական կարիքներուն նկատմամբ զգայուն են, այլ նաեւ ուրիշներուն: Երբ իրենց շրջապարհին մէջ կը տեսնեն չարիք եւ այդ չարիքը կ'ուզեն տեսնել դարմանուած: Բայց քանի փակաւին կայ նիւթական այս աշխարհի վիճակը, ուստի այդ երեւոյթը փակաւին կը մնայ: Ասոր դիմաց, սակայն, այն մարդը, որ կը սգայ, կ'ողբայ ու մանաւանդ աղօթք կը բարձրացնէ առ Աստուած, որպէսզի այդ երեւոյթները ալ դադրին, ուստի Քրիստոս կը կ'ըսէ, որ անոնք Աստուծմէ պիտի մխիթարութիւն գտնեն: Արդեօք այդ մխիթարութիւնը ներկայի կը վերաբերի՞ թէ ապագային: Աստուծոյ վարձարութեան մէջ ներկային վերաբերող բաժին կայ հարկաւ, բայց այդ ներկան մասնակի է, իսկ ամբողջականը ապագային, այլ խօսքով Աստուծոյ արքայութեան մէջ:

6. «Երանի հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը»:

Որո՞նք են հեզերը: Անոնք որոնք բնաւորութեամբ, քաղցր, բարի եւ ազնիւ եղողները: Անոնք, որոնք ոչ թէ միայն մարդոց, այլ նաեւ Աստուծոյ քով ընդունելի են: Որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը, այս պարագային խոստուացուած երկիրը, նոր երկիրը, Մեսիային բերած: Աստուծոյ արքայութիւնն է: